

Մարտ 15, 1979

Արժանաշնորհ

Տ. Տիրան ՔՀՆ. Փափազեան
Հովհան Ս. Գրիգոր Նարեկացի Ակեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Գլուխունութեան:

Միբելի Տէր Տիրան,

Առաջնորդ Սրբազան Հօր Երկրէս բացակայութեան ընթացքին ստացանք Փե-
աքրուար 18, 1979 թուակիր ձեր տեղեկազիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նա-
խագահութեամբ Փետրուար 11ին գումարուած համայնքիդ Ժիական Փողովին մէջ
կատարուած է Ժիական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնե-
լով քուէարկութեան արդիւնքը՝ կը ինդրէք ընտրուած անձերու վաւերացման
պաշտօնագիրը:

Այսու գիրով Առաջնորդ Սրբազան Հօր անունով կը վաւերացնենք Ժիական
Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Հանեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորընտիր Դի-
ւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռածայնի թիւերը:

Կը շնորհաւորենք Ժիական Խորհուրդի նոր կազմը եւ կը մաղթենք յաջող
ու արդիւնաւոր գործունէութեան տարի մը:

Աղօթարար

Յուսիկ ծ. Վրդ. Պաղտասեան
Առաջնորդի Փոխանորդ

Նաթ Արսլանեան
Մշակ Արսլանեան
Ալբն Պոօզանեան
Արմէն Ղազարոս
Ճորժ Սարեան
Օր. Մարկարէթ Երանեան